ԵԴ/30934/02/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

28 հոկտեմբերի 2022 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի Ծովիկ Սարգսյանի ընդդեմ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ԵԴ/30934/02/20 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին ՀՀ սնանկության դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Ծովիկ Սարգսյանը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 2020 թվականի հոկտեմբերի 22-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատասխանող):

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան)՝ 2020 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Դատարանի 2022 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ քաղաքացիական գործը հաձնվել է ՀՀ սնանկության դատարանի քննությանը:

4. Սնանկության դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելու նպատակով գործն ուղարկվել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի հոկտեմբերի 21-ին:

<u>Ենթակայության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

6. 2020 թվականի հոկտեմբերի 22-ին դիմելով դատարան՝ Հայցվորը պահանջել է անվավեր ճանաչել Պատասխանողի իրավանախորդ «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ի և Մարո Ներսիսյանի, Սամվել Ներսիսյանի, Ժորա Ներսիսյանի և իր միջև 2014 թվականի ապրիլի 11-ին կնքված՝ Երևան քաղաքի Ե. Թադևոսյան փողոցի 13-րդ շենքի 16-րդ բնակարանի գրավի (հիփոթեքի) թիվ 48483 պայմանագիրը[1]:

7. Վիճարկվող գրավի (հիփոթեքի) պայմանագրով որպես «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ Ա/Ձ Արսեն Եղիազարյանի ստանձնած վարկային պարտավորությունների ապահովում գրավադրվել է Երևան քաղաքի Ե. Թադևոսյան փողոցի 13-րդ շենքի 16-րդ բնակարանը, որը համատեղ բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Մարո Ներսիսյանին, Սամվել Ներսիսյանին, Ժորա Ներսիսյանին և հայցվոր Ծովիկ Սարգսյանին[2]:

8. Թիվ ԵԴ/0278/04/18 սնանկության գործով Սնանկության դատարանի 2018 թվականի մայիսի 14-ին կայացրած վճռով Արսեն Եղիազարյանը սնանկ է ճանաչվել: Սնանկության դատարանի 2019 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ հաստատվել է Ա.Եղիազարյանի սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1, թերթեր 74-84:
[2] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1, թերթեր 39-44:

ցուցակը, որում ընդգրկվել է նաև Պատասխանողի 30.240,92 ԱՄՆ դոլարի չափով ապահովված պահանջը: Մնանկության դատարանի 2020 թվականի մարտի 6-ի որոշմամբ թույլատրվել է Երևան քաղաքի Ե.Թադևոսյան փողոցի 13-րդ շենքի 16-րդ բնակարանի հրապարակային սակարկություններով վաճառքը[3]:

9. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին, «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Մնանկության դատարան[4]:

10. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին՝ Մնանկության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ թիվ ԵԴ/0278/04/18 սնանկության գործով պարտապանը Արսեն Եղիազարյանն է, որին սույն հայցադիմումով որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացվել: Դատարանն ընդգծել է, որ պարտապանը որևէ քաղաքացիաիրավական վեճով չի հանդիսանում պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ[5]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *արդյո՞ք առկա են «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանները՝ Ծ.Սարգսյանի*

---

[3] Տե՛ս Datalex.am տեղեկատվական համակարգ, գործ թիվ ԵԴ/0278/04/18:
[4] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 87-88:
[5] Տե՛ս քաղաքացիական գործը, թերթեր 93-97:

հայցադիմումի հիման վրա թիվ ԵԴ/30934/02/20 քաղաքացիական գործը Մնանկության դատարանի կողմից քննության առնելու համար:

12. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի»*:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»*:

Մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ. *«Մնանկության գործով պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների առնչությամբ ծագած բոլոր քաղաքացիաիրավական վեճերը, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ, քննվում են նույն սնանկության գործի շրջանակում»*:

2020 թվականի ապրիլի 15-ին ուժի մեջ մտած՝ ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումը վերանայվել է և նույն հոդվածի 3-րդ մասում սահմանվել է հետևյալ կարգավորումը. «*Մնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործեր*»:

13. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն է սահմանված սնանկության գործերի համար, որոնց վարումն իրականացնում է Սնանկության դատարանը: Սնանկության դատարանը միաժամանակ իրականացնում է նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված նախապայմաններին:

Գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործը ենթակա է քննության սնանկության դատարանում սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) քաղաքացիաիրավական վեճը պետք է ծագած լինի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտներից որևէ մեկի առնչությամբ,

բ) վեճի լուծումը պետք է ազդի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,

գ) սնանկության գործը պետք է գտնվի քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը պետք է ավարտված չլինի:

14. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ծ.Սարգսյանը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել հայցադիմում՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի իրավանախորդ «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ի և Մարո Ներսիսյանի, Սամվել Ներսիսյանի, Ժորա Ներսիսյանի և իր միջև կնքված անշարժ գույքի գրավի (հիփոթեքի) պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին[6], որը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

իրավասության դատարանի՝ 2020 թվականի նոյեմբերի 13-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[7],

- Վիճարկվող գրավի (հիփոթեքի) պայմանագրով որպես «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ Ա/Ձ Արսեն Եղիազարյանի ստանձնած վարկային պարտավորությունների ապահովում գրավադրվել է Երևան քաղաքի Ե. Թադևոսյան փողոցի 13-րդ շենքի 16-րդ բնակարանը, որը համատեղ բաժնային սեփականության իրավունքով պատկանում է Մ.Ներսիսյանին, Ս.Ներսիսյանին, Ժ.Ներսիսյանին և հայցվոր Ծ.Սարգսյանին[8],

- Թիվ ԵԴ/0278/04/18 սնանկության գործով Սնանկության դատարանի 2018 թվականի մայիսի 14-ին կայացրած վճռով Արսեն Եղիազարյանը սնանկ է ճանաչվել: Սնանկության դատարանի 2019 թվականի ապրիլի 15-ի որոշմամբ հաստատվել է Ա.Եղիազարյանի սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որում ընդգրկվել է նաև Պատասխանողի 30.240,92 ԱՄՆ դոլարի չափով ապահովված պահանջը: Սնանկության դատարանի 2020 թվականի մարտի 6-ի որոշմամբ թույլատրվել է Երևան քաղաքի Ե.Թադևոսյան փողոցի 13-րդ շենքի 16-րդ բնակարանի հրապարակային սակարկություններով վաճառքը[9],

- Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան[10],

- Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, **մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին**՝ Սնանկության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝

---

[7] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 13-րդ կետը:

նշելով, որ թիվ ԵԴ/0278/04/18 սնանկության գործով պարտապանը Արսեն Եղիազարյանն է, որին սույն հայցադիմումով որևէ նյութաիրավական պահանջ չի ներկայացվել: Դատարանն ընդգծել է, որ պարտապանը որևէ քաղաքացիաիրավական վեճով չի հանդիսանում պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ[11]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-13-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, նախևառաջ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում թիվ ԵԴ/30934/02/20 քաղաքացիական գործը հարուցվել է 2020 թվականի նոյեմբերի 13-ին, երբ արդեն իսկ գործել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով կատարված լրացումներով և փոփոխություններով խմբագրությունը: Հետևաբար, սույն քաղաքացիական գործի ենթակայության հարցը որոշելիս կիրառելի են թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքով կատարված լրացումները և փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթները: Ուստի, Սնանկության դատարանի կողմից սույն գործի ենթակայությունը որոշելիս որպես հիմք ընդունված՝ մինչև 2020 թվականի ապրիլի 15-ը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի չէ:

Նման պայմաններում, քննարկման առարկա դարձնելով սույն որոշման 13-րդ կետում վերլուծված՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վավերապայմանների առկայության հարցը, պետք է փաստել, որ՝

ա) սույն քաղաքացիաիրավական վեճը ծագել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտի, այն է՝ սնանկ ճանաչված Ա.Եղիազարյանի՝ վարկային պարտավորությունների ապահովման միջոցի՝ անշարժ գույքի գրավի պայմանագրի առնչությամբ,

բ) սույն վեճի լուծումը ազդեցություն է ունենալու սնանկության վարույթի շրջանակներում Պատասխանողի ապահովված պահանջի բավարարման հնարավորության վրա,

---

[11] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

գ) թիվ ԵԴ/0278/04/18 սնանկության գործը գտնվում է քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը դեռևս ավարտված չէ:

16. Այսպիսով, վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանները՝ Ծ.Սարգսյանի հայցադիմումի հիման վրա թիվ ԵԴ/30934/02/20 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար: Ուստի, թիվ ԵԴ/30934/02/20 քաղաքացիական գործը ենթակա է Սնանկության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԴ/30934/02/20 քաղաքացիական գործը՝ ըստ հայցի Ծովիկ Սարգսյանի ընդդեմ «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության՝ անշարժ գույքի հիփոթեքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**